

Շիրվանզադե Տասնուհինգ տարի անցած

Պատմվածք

— Դատավորները գալիս են...

Ամբոխը միահամուռ ոտքի կանգնեց, խուլ շշույուններն ընդհատվեցին, ծայրե ի ծայր լիքը դահլիճում թագավորեց լռություն:

Պահապան զինվորներն ավելի մոտիկացան վանդակապատին, որի հետևում կանգնած էր օրվա տխուր հերոսը: Նրա ոտներն ու ձեռները շղթայած էին: Նա դեռ պատանեկական հասակումն էր, բարակ, նորաբույս ընչացքը հազիվհազ ծածկում էր նրա ստորին շուրթը: Նա գեղեցիկ էր, թուխ աչքերով, փոքրիկ ձեռներով և բավական նուրբ կազմվածքով: Նրա երեսի գծագրությունը չէր արտահայտում եղեռնագործի հոգի:

Առաջ ներս մտավ նախագահը, հետո քննիչ անդամները, հետո դատախազը, հետո քարտուղարները: Նրանց դեմքերը սառն էին, անտարբեր և, միևնույն ժամանակ, ահարկու հարյուրավոր ամբոխի համար:

Հանցավորն յուր հայացքն հառեց դեպի այն կողմ և մի րոպե չանցած լսվեց նախագահի անհողողող ձայնը.

— Բաբվի նահանգական դատարանի քրեական բաժինը Գրիգոր Խանզադյանցին, մեղադրելով Սեյիդ-Ազիմի որդի Դուրբան Ալիի սպանության համար, դատապարտեց...

Հանցավորը մի ցնցումն գործեց. նրա ձեռների շղթան մի թեթև շաչուն արծակեց: Ամբոխը, ինչպես մի անձնավորություն, զսպեց յուր շնչառությունը:

— Դատապարտեց՝ զրկել բոլոր անհատական և ստացական իրավունքներից, ենթարկել տաժանակիր աշխատանքի Տոմսկի նահանգի գավառներից մեկում տասնուերկու տարի ժամանակով, այնուհետև հավիտենական բնակության Ռուսիայի հեռավոր նահանգներում:

Մինչ թարգմանն այս խոսքերը կրկնում էր հանցավորին, դահլիճի մի անկյունից լսվեց կանացի մի սուր ճիչ:

Հանցավորը ոչինչ չպատասխանեց նախագահի հարցին, թե, արդյոք, գոհ է այդ վճռով: Պահապանները բաց արին վանդակապատը, և նա թուլացած, սփրթնած ցած իջավ սանդուղքով: Նրա դողդոջուն ոտը դահլիճի հատակին չհասած. կականելով առաջ վազեց և նրա պարանոցին փաթաթվեց ասիական հագուստով մի կին:

Դա դատապարտվածի հարազատ մայրն էր, որ յուր թևերի տակ գզվելով սնել ու մեծացրել էր նրան տասնուհինգ տարի, մինչև այն ժամանակ, երբ որդին բոլորովին անձնատուր եղավ կյանքի մոլություններին: Եվ երկու տարի չանցած երկրորդ տարիաձուն ձգեց նրան փորձության մեջ:

Ո՛չ ամբոխի խնդիրքը, ո՛չ ոստիկանների խոսքը, ո՛չ սվինների սպառնալիքը չկարողացան մորը բաժանել յուր անդրանիկ որդուց: Նա խղճալի էր, բայց շատերն ավելի խղճում էին երիտասարդ դատապարտվածին: Ո՞վ չէր ճանաչում նրան N քաղաքում, ո՞ր մայրը չէր նախանձել նրա մորը, ո՞ր աղջիկը տասն անգամ չէր դիտել նրան դռների հետևից, ասիական համեստության և ամոթխածության թանձր քողի — շալի տակից, երբ սիրուն տղան անցնում էր փողոցով, գլուխը

բարձր պահած, գդակը անփույթ կերպով ձախ ականջի կողմը թեքած, կուրծքը դուրս ցցած, ճակատը բաց, դեմքը հանդուգն, կրակոտ: Եվ նա, շատերի նախանձի այդ առարկան, հանկարծ զոհ դարձավ յուր մոլի կրթերին, հասարակական ստոր խավի: Ծնունդ մի անառակ թրթուհու ոտքի տակ դնելով ծնողների նամուսը և յուր ծաղիկ կյանքը:

Երբ Անթառամն ուշքի եկավ, յուր շուրջը կանգնած տեսավ միայն մերձավոր ազգականներին: Նա անզգայաբար թույլ տվեց, որ իրան կառք նստեցնեն և տանեն: Նա կգնա դատավորների մոտ, կաղերսի, որ վճիռը փոխեն, եթե չեղավ՝ նա կդիմի ավելի բարձր դատավորներին: Նա մինչև անգամ ոտաբաց կգնա թագավոր կայսեր մոտ, կընկնի նրա ոտներին: Նա Բարի է, նա չի թույլ տալ, որ մի մայր զրկվի իր որդուց և այն էլ ինչ որդուց...

— Տասներկու տարի, տասներկու տարի, անխի՛ղճ մարդիկ...

Մարտ ամսի վերջն էր: Վոլգա գետի ստորին մասերի սառույցն արդեն կոտրվել էր և Բաբվի ու Ռուսիայի մեջ նավագնացությունը սկսվել:

Եղանակը բավական ցուրտ էր. մանր, փոշիանման անձրև էր գալիս, ծովը խաղաղ էր, միայն նրա հեռավոր հորիզոնը ծածկված էր մոխրագույն թանձր մշուշով: Փորձառու մարդիկ հավատացնում էին, թե խորքում, ափերից շատ հեռու փոթորիկ կա: Իսկ «Կասպի» շոգենավի հանդուգն նավապետն արհամարհում էր թե բնության սպառնալիքն և թե մարդկանց խորհուրդները:

— Շտապեցե՛ք, — հրամայում էր նա անվրդով ձայնով նավաստիներին, — կես ժամից հետո պիտի խարխսխը հանենք: Բոլոր ապրանքները բարձվա՞ծ են:

— Բարձված են:

— Որտե՞ղ են ճանապարհորդները:

Նավապետը վերջին բառն արտասանեց հեգնական եղանակով:

— Ահա՛...

Նավահանգստի ծայրում հավաքված էր միատեսակ մոխրագույն կապույտ վերարկուներ հագած աքսորականների խումբը, թվով տասը հոգի, շրջապատված կրկնապատիկ զինվորներով: Հացի կապոցները ձեռներին բռնած, թշվառները մռայլ ու խոժոռ հայացքով նայում էին ջրի անհուն տարածությանը, որ այն օրվանից առմիշտ պիտի անջատեր նրանց հայրենիքից: Նրանք բոլորն օտար քաղաքներից էին բերված: Չկար մեկը, որ արտասուքով կամ գեթ ցավակցական հառաչանքներով ճանապարհի դներ նրանց: Ո՛վ գիտե, նահանգի ո՛ր գավառում և ո՛ր գյուղումն էին այդ թոպեին ողբում նրանց մայրերն ու քույրերը: Մտածում էին նրանք այդ մասին, թե ոչ — աստծուն էր հայտնի: Երբեմն նրանք տիրում էր մի կատաղի զվարճություն: Նրանք միմյանց հրում էին, կատակներ էին անում, հըռհըռ ծիծաղում էին: Կարծես, առաջիկա ճանապարհորդությունը մի զվարճալի զբոսանք էր խոստանում նրանց: Բոլորն էր ավագակներ էին, ո՛վ գիտե, քանի անմեղների մեջ թաթախած իրենց ձեռները:

Միայն մեկն էր բացառություն ներկայացնում այդ աքսորականների մեջ յուր հոգեկան դրույթամբ: Նա կանգնած էր խմբից մի փոքր հեռու, ամենից տեսքով և ամենից երիտասարդ: Չինվորների շղթայակապ շարքի հետևում կանգնած էր նրա մայրն յուր մի քանի ազգականների հետ:

Երբ յուր բոլոր հույսերից զրկվեց, տեսնելով, որ աղի աղերսանքներն ոչ ոքի վրա չազդեցին, Անթառամին մտում էր հաշտվել յուր վիճակի հետ: Երեք ամիս չանցած Գրիգորին դուրս բերեցին

յուր ծննդյան քաղաքից: Անթառամը հետևեց նրան մինչև Բաբու: Եվ ահա վերջին անգամն էր նա տեսնում յուր որդուն:

Գրիգորն աշխատում էր երևալ ուրախ, զվարթ և ճիզն էր թափում մխիթարել յուր մորը: Բայց նրա ամեն մի մխիթարական խոսքը կրկնապատկում էր Անթառամի տանջանքը:

Կուրծքը կիսով չափ բաց, աչքերը արտասուքից ցամաքած, նա յուր հոգեկան վիշտն արտահայտում էր միայն գլխի տարօրինակ շարժումներով: Եվ այդ շարժումներն ավելի ազդու էին, քան առաջվա արտասուքը, հեկեկանքն ու գոռումները: Նա ձգտում էր առաջ, ուզում էր մի անգամ ևս փաթաթվել յուր սիրեցյալի պարանոցին: Բայց բավական է, զինվորական կարգապահությունը սրտի թույլ զեղումներ չի սիրում:

Սվինների սպառնալից շարքը մի անխորտակելի պատնեշ է մոր և որդու միջև: Եվ որքան գեղեցիկ էր նա այն օրն յուր մոր աչքում, նույնիսկ աքսորականի տգեղ հագուստով, մի տարվա հոգեկան և մարմնական զրկանքներից հետո:

Շոգենավի սուլիչի առաձգական ձայնը լսվեց, Անթառամի աչքերը մթնեցին: Աքսորականներին հրամայեցին առաջ գնալ, և մոխրագույն խումբն անցավ շոգենավի տախտակամածի վրա:

Բարակ անձրևը շարունակվում էր: Ի՞նչ, նա, որ մեծացել է ծնողների խնամող հարկի տակ, գիշերը պիտի անցուցանի բաց օդում, ծովի անհուն տարածության մեջ, անձրևի՞ ներքո: Ոչ երբեք, թողէ՛ք Անթառամին ծովը գրքի իրան, խեղդվի, որ չտեսնի որդուն այդ դրության հասած: Բայց ո՞վ կթողնի և ինչո՞ւ. չէ՞ որ աստծու ձեռին ոչինչ անհնարին չկա և միթե չի՞ կարող նա ազատել Անթառամի որդուն:

Իսկ շոգենավը մեղմիկ սահում էր և նավահանգստից հեռանում: Անջատող պատնեշն այժմ ծովի խորությունն էր, այսինքն՝ ինքը բնությունը:

Եվ որքան արագ էր մեծանում այդ պատնեշը:

Ահա խարիսխը բարձրացավ ծովի հատակից, շոգենավն յուր կտուցը ծռեց դեպի հակառակ կողմը. աքսորականների մոխրագույն գլխարկներն են միայն երևում: Մի կարմրագույն լա՛թի կտոր այդ գլխարկներից վեր սավառնում էր օդի մեջ: Դա Գրիգորի վերջին բարևն էր:

Զբացավ կարմիր թաշկինակի ևս, և ամեն ինչ ձուլվեց, դարձավ մի անորոշ սև գունդ, որից բարձրանում էր թանձր նավթային ծուխն և սփռվում մուգ-կապտագույն ծովի տատանվող մակերևույթի վրա...

Անցան առաջին ամիսները: Անթառամն արդեն վերադարձել էր յուր ծննդյան քաղաքը, այնտեղ, ուր հանցանք էր գործել և ուր դատապարտվել էր հավիտենական աքսորանքի նրա որդին:

Օր-օրի վրա նա սպասում էր նամակի: Առաջին նամակը ստացավ միայն՝ ինն ամիս անցած:

Գրիգորը նկարագրում էր նախ ծովային վտանգալից փոթորիկը, բացօթյա կյանքը, հետո ընդարձակ Ռուսիայի լայնատարած դաշտերը, ցուրտը, անձրևները, ձյունը, բուքը, մի խոսքով, բնության և մարդկության արհավիրքը, որ կրել էր նա յուր հնգամյա ճանապարհորդության ընթացքում: Վերջապես, նրանց բերել են աքսորատեղին: Դա մի փոթորիկ ավան է քաղաքից հեռու: Այստեղ կան արթունական հանքեր և մի գործարան, ուր բոլոր աշխատավորներն աքսորականներ են: Ահա այս հանքերում և գործարանում պիտի աշխատի և Գրիգորը, ինչպես մի բեռնակիր մշակ, միշտ և անդադար, ամբողջ ցերեկը, ստորերկրյա մթին և խոնավ հանքերում, առանց իրավունքի գործարանի շրջապատից դուրս ոտք դնելու:

Տասն անգամ Անթառամն յուր երկրորդ որդուն ստիպեց այդ նամակը կարդալ: Նա այն օրն, ինչպես ասում էր ինքը, թաղում էր յուր որդուն: Նա հրավիրել էր բոլոր մոտիկ ազգականուհիներին, որ յուր ցավին ցավակից լինեն: Եվ այդ կանայք փոխանակ մխիթարելու, ավելի գրգռում էին նրա վիշտն իրենց կեղծ և անկեղծ հառաչանքներով, իրենց կարեկցական դարձվածքներով: Նամանավանդ կեղեքվում էր նրա սիրտը, երբ այդ կանանցից յուրաքանչյուրը հիշեցնում էր Գրիգորի սիրուն կերպարանքը, հարավային բորբոքուն երևակայությամբ նկարագրելով նրան կրկնակի գեղեցիկ գույներով:

Հետագա ձմեռը ստացվեց երկրորդ նամակը: Այս անգամ Գրիգորը մռայլ նկարագրություններ չէր անում: Երևում էր, որ նա արդեն սկսել է ընտելանալ աքսորականի վիճակին, մխիթարում էր յուր մորը, հիշեցնում էր, թե Սիբիրն էլ մի մարդաբնակ աշխարհ է, թե այնտեղ էլ մարդիկ են ապրում և այլն, և այլն: Եվ յուր դրությունն ավելի թեթև ցույց տալու համար դիմում էր համեմատական նկարագրությունների յուր բախտակիցների կյանքից: Մասնավորապես նա գրում էր մի նախկին հայ պաշտոնյայի մասին, որ աքսորված էր քսան տարով իբր թե կաշառակերության և եղեռնագործների, գողերին ու ավազակներին գաղտնի աջակցելու համար: Թե ի՞նչ է եղել այդ մարդն առաջ, աստված գիտե, բայց յոթ տարի աքսորականի կյանքի դառնությունները ճաշակելուց հետո, նա շատ մեղմ, բարեսիրտ և խեղճ մարդ է դարձել:

— Այսպիսիներին տեսնելիս սիրտս մխիթարվում է,— ավելացնում էր Գրիգորն յուր նամակում:

Տարին անցնում էր տարու հետևից, ժամանակն Անթառամին ևս ընտելացնում էր յուր վիճակին, հարկավ, արտասուներ և լացը նրա կյանքի անհրաժեշտ պահանջը դարձնելով: Ամեն անգամ, որ նա հիշում էր (և ե՞րբ չէր հիշում) այն րոպեն, երբ որդու կարմիր թաշկինակը սավառնեց օդում, նրա կրծքից դուրս էր հնչում ծանր հոգոց, և աղի կաթիլները ողողում էին նրա նիհարած այտերը: Բայց այդ լույսի մի դառն երազ էր համեմատությամբ այն պատկերի, որ միշտ կանգնած էր Անթառամի աչքի առջև, որ միշտ հալածում էր նրան:

Ահա նա, ուրախ, անհոգ դեմքով, բաց ճակատով, երիտասարդական հրով վառված աչքերով: Որքան ուրախացնում էր Անթառամին որդու այդ կերպարանքը, որքան հպարտանում էր և զմայլվում, տեսնելով նրան ընկերների շրջանում բոլորից սիրուն, բոլորից կայտառ, բոլորից աշխույժ: Այո, ամբողջ թաղի մեջ չկար մի ուրիշը նրա նման: Եվ այդ լույս մայրական երևակայության արգասիք չէր, այլ մասամբ և իսկություն: Քանի-քանի ազգական կանայք ստիպել են Անթառամին՝ թալիսմաններ կապել Գրիգորի վզին, որ նա զերծ մնա չար աչք դիպչելուց: Չօգնեցի՞ն նրան այդ թալիսմանները:

Արդյոք նո՞ւյնն է մնացել Գրիգորը Սիբիրում, թե՞ փոխվել է. չէ՞ որ անցել է յոթը տարի նրա աքսորվելուց: Սակայն Անթառամի երևակայությունը կենդանի պատկերացնում էր քսանուհինը — երեսուն տարեկան Գրիգորին այնպես, ինչպես նա տեսել էր առաջ և ինչպես անջնջելի դրոշմվել էր նրա հիշողության մեջ — տակավին պատանի, թարմ, քսանումեկ տարեկան Գրիգորին: Ցերեկն երևակայությամբ, գիշերն երազում, միշտ և անդադար այդ պատկերը կանգնած էր նրա աչքերի առջև:

Յոթ տարի անցավ, ուրեմն մնում է հինգ տարի: Անթառամը համբերություն կունենա հինգ տարի ևս կրել յուր վիշտը: Նա օրեր և գիշերներ էր հաշվում, թե երբ պիտի լրանա որոշված ժամանակն և երբ հիշում էր, որ տաժանակիր աշխատությունից ազատվելուց հետո ևս Գրիգորը չի կարող վերադառնալ հայրենիք, գլուխը թեթում էր կրծքին և անշարժ մնում:

Որդին աքսորվելուց հետո նա մի առժամանակ աստծուց երես էր դարձրել, համոզված, որ նա անարդար վարվեց յուր հետ: Բայց կարո՞ղ էր նա երկար միջոց անհաշտ մնալ նրա հետ, որ մխիթարության և սփոփանքի անսպառելի աղբյուր է ամենայն տեսակ թշվառների համար: Եվ

ահա նա դարձյալ ամեն երեկոյան գնում էր եկեղեցու սյուներից մեկի հետևում, ձեռները բարձրացնում էր վերև, աչքերը հառում էր աստվածամոր պատկերին և երկար, երկար ժամանակ անշարժ մնում միևնույն դրության մեջ: Հանուն մայրական սիրո, նա աղերսում էր աստվածամորը միջևորդ լինել, որ աստված նրան մի օր արժանացնի յուր որդու տեսությանը:

— Չմեռնեմ, մի անգամ էլ տեսնեմ նրան,— կրկնում էր նա բյուր անդամ կրկնած միևնույն դարձվածք:

Այսպես անցկացրեց Անթառամը տասներկու տարի, միշտ հուսալով, թե պետք է արժանանա որդու տեսությանն և միշտ ապրելով միմիայն այս հույսով:

Վերջապես, նա ստացավ վաղուց սպասած լուրը: Երջանիկ օր, օ՛ր, երբ տասներկու տարվա ընթացքում առաջին անգամ երևեցավ ուրախության ժպիտ Անթառամի թառամած դեմքի վրա: Գրիգորն ազատվել է տաժանակիր աշխատանքից, ազատվել է առավոտից մինչև երեկո մթին և խոնավ ստորերկրում աշխատելուց, ազատվել է եղեռնագործների, գողերի, ավազակների և կոպիտ զինվորականների հասարակությունից, նրանց հետ մի բնակարանում ապրելուց, մի ամանից ուտելուց, մի ամանից խմելուց, մի խոսքով, աքսորականի կապանքներից:

Իսկ ա՛յժմ...

Ահա ինչ էր ավելացնում Գրիգորն յուր նամակի վերջում:

(«Հենց որ ժամանակս վերջացավ, կամանդիրը թուղթ տվեց: Ազատվեցի անիծված դժոխքից, եկա քաղաք: Հաց չունեի, շոր չունեի, համարյա տկլոր էի, ասացի ինչ անեմ:

Էստեղ մեկ մարդ կա քեարփուչի (աղյուսի) զավոդ (գործարան) ունի. աղաչեցի, պաղատեցի, վայնաչարի տեղ տվավ ինձ: Իհարկե, նրա էլ խիղճն եկավ ինձ, ինչու որ ինքն էլ առաջ ինձ պես կատորժնիկ (աքսորական) է եղել: Հիմա, գոհություն արարիչ աստծուն, ես պրիկաշչիկ (գործակատար) եմ զավոդում, գլուխս մի կերպ պահում եմ, եթե ինձանից հարցնես, ողջ, առողջ եմ, սիրելի ծնող, շատ էլ ֆիքր մի անիր: Մեկ էլ, սուտ-դորթ, ասում են, որ նոր թագավորը թախտ (գահ) նստելու օրը մանիֆեստ (հրովարտակ) է դուրս բերել կատորժնիկների համար: Աստված հաստատ պահի: Իսկը չեմ իմանում՝ ո՛ր կատորժնիկների համար է թագավորի ողորմությունը: Երեկ ընկերներիցս մեկն ասում էր, ես էլ հույս աստծո, որ ազատվողների մեջ լինեմ: Կամանդիրին հարցրի, ասեց մանիֆեստը մինչև օրս չի հասել, չեմ իմանում կա, չկա: Էսպես իմանաք: Հենց որ հասավ, իսկույն կիմանամ, կգրեմ: Գոհություն աստծո: Կրկին աղաչանքս է, որ շատ էլ սիրտդ չմաշես, աղոթք անես մեղքերիս համար, ժամ գնաս, ջուխտ-ջուխտ (զույգ-զույգ) մոմ վառես: Սիրելի մայր, Միխակին, Թագուհիին, Սեյրանին և այլ բարեկամաց ու հարցանողաց շատ-շատ բարև: Հավիտյանս հավիտենից ամեն:

Մնամ քեզ կարոտ, հարազատ որդի սիրիրնիկ՝

Գրիգոր Խանզադյանց»:

Սակայն անցավ մի տարի ու կես ևս, իսկ Գրիգորի հետագա նամակների բովանդակությունը գրեթե անփոփոխ էր մնում: Կայսերական մարդասեր հրովարտակը տակավին սպասվում էր: Գրիգորը սրան նրան հարցնում էր, ոչ ոք մի որոշ պատասխան չէր տալիս: Բայց նա դարձյալ միսիթարում էր մորը, դարձյալ հույս էր տալիս յուր վերադառնալու մասին:

Եվ Անթառամն անհամբեր սպասում էր. օրերը նրա համար անցնում էին անտանելի դանդաղությամբ, մինչ կլրանար ժամանակամիջոցը, որ տևում էր բնականաբար Գրիգորի մի

Նամակից հետո մինչև մյուսի ստանալը: Ստացվում էր հաջորդ նամակը, և դարձյալ նույն անորոշ բովանդակությամբ:

Մի ամառային օր, իրիկնադեմին, Անթառամը նստած գավթում քառասունուերկու սևացած ու չորացած սիսեռների վրա գուշակում էր ապագան: Հանկարծ շնչասպառ ներս վազեց նրա երկրորդ որդին, Միխակը, և ուրախ-ուրախ գոչեց.

— Ի՞նչ կտաս, որ ասեմ...

Անթառամը, չնայելով իր ծերությանը, աշխուժությամբ թռավ ոտքի, իլեց որդուց նամակը, որ սա բռնած ուներ յուր ձեռքում: Նա մոռացավ, որ ինքը կարդալ չգիտե:

— Շո՛ւտ արա, հոգիս մի հանիր, կարդա,— գոչեց նա, նամակը վերադարձնելով որդուն:

Կարդաց: Նամակը գրված էր Գրիգորի տիրոջ կողմից: Սա հայտնում էր, թե Գրիգորն արդեն ազատություն է ստացել և իսկույն ուղարկվել հայրենիք և թե շուտով, երևի տեղ կհասնի:

Ճի՞շտ է, արդյոք: Միգուցե գրողը մի չար թշնամի է, որ կամեցել է դառն կատակ անել, միգուցե «ազատություն» բառը մի այլ, խորհրդավոր նշանակությամբ է գործածված նամակի մեջ:

Բայց աստված լսել էր Անթառամի աղերսանքը. նա չպիտի մեռներ, մինչև որ տեսներ յուր որդուն: Չանցավ նամակ ստանալու օրից մի շաբաթ, Միխակը մի օր դարձյալ տուն վազեց շնչասպառ և այս անգամ ձեռքումը մի հեռագիր... Գրիգորից: Համառոտ խոսքերով նա հայտնում էր, թե հասել է Ն... Նահանգական քաղաքը և ամենաշատը մի ամսից հետո կլինի իր ծննդավայրում:

— Մի ամիս, մի ամիս չմեռնեմ ու տեսնեմ, չմեռնեմ ու տեսնեմ...

Այս խոսքերը կրկնելով, Անթառամն այն գիշերը համարյա մինչև լույս չկարողացավ քնել, այնքան նա հուզված էր ուրախությունից: Ի՞նչպես. մի թե արդարև տասնուհինգ տարուց հետո նա կրկին պիտի գտնե յուր մեռած ու կորած որդուն:

Օրը կիրակի էր: Անթառամի որդիները — Միխակը և Սեյրանը ճաշից հետո գնացել էին քաղաքի շրջակայքը՝ զբոսնելու: Նա նստած էր միայնակ թախտի վրա, պատուհանի առջև և, ձեռները կրծքին դարսած, յուր մռայլ ու անորոշ հայացքը հառել էր երկնքի հեռավոր հորիզոնին, ուսկից նա, կարծես, մի բան սպասում էր:

Նա մի քանի րոպե առաջ դարձյալ հմայել էր քառասունուերկու սիսեռների վրա և երեք կարգի բաժանված սիսեռների միջին կարգը դուրս էր եկել — չորս, երկու, մեկ-մեկ իրարու հետևից, որ ասել էր ճանապարհ:

— Չմեռնեմ, մի անգամ էլ տեսնեմ, չմեռնեմ, մի անգամ էլ տեսնեմ,— արտասանում էին դարձյալ նրա ցամաքած շրթունքները:

Այնինչ նրա անորոշ հայացքը շարունակ հառած էր երկնքի հորիզոնին, ուր փոքր առ փոքր բարձրանում էին ամառային բամբակագույն ամպերի կույտերը և դիզվում միմյանց վրա: Անդադար շարժվելով, այդ ամպերը գանազան ձևեր էին ընդունում — մերթ բարձրագագաթ լեռների, մերթ հրեշավոր կենդանիների: Եթե քառասունուերկու սիսեռների գուշակությունը պիտի կատարվի, թող ամպերն էլ գուշակ են, թող նրանց բազմաթիվ կույտերից մինը կառքի ձև, ձիու կամ ուղտի կերպարանք ներկայացնի, այն ժամանակ Անթառամը կիմանա, որ ճանապարհը

դատարկ չէ: Եվ ահա, հագիվ մնահավատ կնոջ մտքով անցել էր այս խորհրդավոր ցանկությունը, երբ կապտագույն հորիզոնի վրա ձգվեց մի սպիտակ գիծ, այնուհետև նա ծովեց այս կողմ, այն կողմ և պատկերացավ... մի հսկայական ձյունագույն թափանցիկ ձի՝ քուլա-քուլա ամպերից: Անթառամի սիրտը սկսեց ուժգին բաբախել. կարելի բան է, որ այս բոլոր գուշակություններն ապարդյուն մնան:

Մի ամբողջ ժամ նա այս դրությամբ անշարժ նստած էր. փոքր առ փոքր նրա ջղերին տիրեց թուլություն և նա ընկղմվեց մի տեսակ թմրության մեջ: Երբեմն-երբեմն նա ցնցվելով սթափվում էր, նայում էր աջ ու ձախ, ականջ էր դնում դեպի դուրս և կրկին գլուխը թեքում կրծքին: Հանկարծ նա ուժգին ցնցվեց, վեր ցատկեց տեղից և սկսեց ականջ դնել: Նրան թվում էր, թե լսում է ինչ-որ զանգակների թույլ հնչյուն, հետո ոչինչ չի լսում և սփռում է դարձյալ միևնույն լռությունը շրջակայքում: Բայց ոչ, եթե նրա ուղեղը խանգարված չէ, եթե նրա ուղեղը չի խաբում, արդարև լսվում է փոստային կառքի զանգակների ձայն և լսվում է հետզհետե ավելի պարզ ու որոշ: Ահա այն, վերջապես, բոլորովին մոտեցավ և, կարծես, հնչում է պատուհանի տակ: Հանկարծ զանգակների ձայնին խառնվեց կառքի անիվների դողոյունը. խուլ փողոցն աղմկվեց մի քանի վայրկյան և ամեն ինչ դարձյալ լռեց...

Անթառամի ոտները ներքին հուզմունքից սկսեցին դողալ: Նա վազեց դուրս, որքան կարող էր շտապով ցած եկավ փոքրիկ սանդուղքով, ձեռներով ծնկները բռնած: Գավթի մեջտեղում կանգնած էր մի անծանոթ մարդ և կասկածանքով նայում էր դեսուդեն...

Այդ մարդը հագած էր սևագույն և կոպիտ մահուկից ռուսական ձևով կարած կապայի նման մի կարծ բան: Հասարակ զինվորականի կոշիկներ երկայն անկարուրդով և կոշտ կտավից կարած լայն վարտիք: Նա գլխին գրած էր սպիտակ ոչխարենուց կարած բոլորակ գդակ, որի բավական երկայն մագերը ծածկել էին նրա ճակատն ամբողջովին:

Այդ մարդը նիհար էր, կուրծքը ճնշված, ներս ընկած, մեջքը կորացած, մի ուսը մյուսից նկատելի կերպով բարձր, երեսը խորշումած, միտքը գզգզված, աչքերը խորն ընկած, այտերը, ծնոտը և կոկորդի ոսկորը նիհարությունից դուրս ցցված: Նրա ձեռները ոսկրոտ էին, կոշտ ու պինդ, ինչպես որմնադրի կամ տարին տասներկու ամիս քար կրող մշակի ձեռները, կապույտ ջղերը որոշ գծավորված երկաթագույն և կուչկուչված կաշվի տակից, մատների հողերը դուրս ցցված, այնպես որ հիշեցնում էին մոխրախառն կրակի մեջ խորոված շագանակներ:

Նրա ոտները ներքևի կողմից երևում էին ծուռ և երբ նա, յուր ձեռնափայտի վրա հենվելով, մի քանի քայլ առաջ եկավ, նշմարվեց, որ կաղում է փոքր-ինչ. կարելի էր կարծել, որ նրա ոտների ոլոգները իրանց տեղումը չեն կամ գարշապարներն ուռած են: Անախորժ, վերին աստիճանի անախորժ և, միևնույն ժամանակ կասկածավոր ու երկյուղալի տպավորություն էր գործում այդ մարդու ամբողջ կերպարանքն առաջին հայացքից: Նրան տեսնողն և՛ կիսղճար, և՛ կսարսափեր ականամա, իսկ եթե լսեր, որ ողորմություն է աղերսում, կմերժեր կամ եթե ողորմել կամենար, չէր մոտենար նրան, հեռվից կձգեր փողն և կհեռանար:

Անթառամը շտապելով և հագիվից իր դողոցուն քայլերը փոխելով, անցավ այդ մարդու մոտով, առանց ուշադրություն դարձնելու նրա վրա:

Անծանոթը խոր խորշերի մեջ թաղված աչքերով ոտից գլուխ չափեց նրան ուշադրությամբ: Տարօրինակ և զարմանալի էր այդ աչքերի արտահայտությունը: Կարծես, նրանք վաղուց գրկվել էին կենդանությունից, կարծես, նրանց խոշոր բիբերն անշարժ էին, սպիտակ շրջանակները սառած, հողագույն կոպերը քարացած:

Նա նայեց Անթառամի հետևից, նայեց աջ ու ձախ, հաստաբուն թթենուն, տան փոքրիկ փայտյա պատշգամբին, կիսավեր շրջապարսպին և գլուխն երկմտորեն շարժեց: Թվում էր, որ նա

տատանման մեջ է. չգիտե ինչ անե, խոսե, թե լռե, առաջ գնա, թե ետ դառնա, բարկանա, թե ուրախանա:

Այնինչ Անթառամը հասավ դրսի դռներին, նայեց դեպի փողոց և կրկին շփոթված ետ դարձավ: Այս անգամ նա նկատեց անծանոթին և, չմոտենալով նրան, հուզված ձայնով հարցրեց:

— Դո՞ւ ես կառապանը: Անծանոթը լուռ էր:

— Կառապանը դո՞ւ ես: Անծանոթը լուռ էր:

— Բաս ինչո՞ւ (կանգնեց մեր դռների մոտ... Ուրի՞շ է եկողը... Նա չեկա՞՞վ...)

Անծանոթը փայտի օգնությամբ մի քայլ առաջ դրեց: Նա դարձյալ լուռ էր և միայն յուր կիսակենդան և երկմիտ հայացքը չէր հեռացնում Անթառամի երեսից:

— Ողորմած Աստված, ինչո՞ւ ես ինձ ծաղր անում,— գոչեց Անթառամը դառնությամբ,— ես սպասում եմ... Չէ, կանգնիր, այ մարդ, դու, ո՞վ ես... Տեր աստված... ավազակ... ի՞նչ ես ուզում ինձանից...

Այստեղ անծանոթն երկու ձեռները հենեց փայտի վրա, մեջքը քիչ թեթեց և հառաչելով արտասանեց հետևյալ խոսքերը.

— Կատարվեց ասածս... ոչ ես ճանաչեցի, ոչ նա է ճանաչում...

Անթառամը սարսափած և անգիտակցաբար ետ կանգնեց: Այդ մարդու ձայնը նրա հոգու խորքում զարթեցրեց վաղուց, շատ վաղուց թմրած մի բան: Մի թույլ հիշողություն լուսավորեց նրա հոգին: Այդ նրա տասնութ տարի առաջ մեռած և մոռացված ամուսնու ձայնն է, այո՞, իսկ և իսկ այն թույլ, խեղճ ողորմելի ձայնը, միայն ավելի տկար: Բայց ի՞նչպես, կարելի բան է, որ մեռելը վեր կենա տասնութ տարվա գերեզմանի խորքից: Միթե նա երազո՞ւմ է կամ գուցե ցնորվե՞լ է:

— Ես Գրիգորն եմ... չճանաչեցի՞ր...

Ենթացիկ, արդյոք, Անթառամի ականջները, թե՞ դարձյալ շարունակվում է նրա գառանցանքը: Սակայն նա կարող է երազում լինել, կարող է անգամ ցնորված լինել, բայց որ չճանաչի իր Գրիգորին, որ կարողանա մազու չափ խաբվել նրան տեսնելիս, դա անկարելի բան է: Եվ ոչ միայն նա, այլև ամենքը, որ մի անգամ տեսել են նրա գեղեցկադեմ, նրբակազմ որդուն, մի թե երբևիցե կարող են չճանաչել թեկուզ տասնուհինգ տարուց հետո:

Ինչպես քնից կոր զարթնած նա շփեց ձեռներով աչքերը, որ ավելի պարզ դիտե յուր առջև կանգնած տարօրինակ անձնավորությունը: Եվ կար մի անխուսափելի, մի անբաժան երևույթ, որ խանգարում էր նրան տեսնել իսկությունը:

Դա Գրիգորի, նախկին Գրիգորի սիրուն կերպարանքն էր, այնպես, ինչպես տպավորվել էր նրա հիշողության մեջ: Սա է ահավասիկ Անթառամի իսկական որդին, այս սիրուն պատկերը որ տասնուհինգ տարի շարունակ վառ պահել է նրա երևակայությունը, որ ձուլվել ու միացել է նրա հոգու հետ, որ գիշերը խլել է նրա քունը, ցերեկը՝ հանգստությունը: Եվ հանկարծ այդ մյուսը, այդ ավազականման տգեղ, այլակերպ անծանոթը հանդգնում է...

Դա մի օդերևույթ է...

— Եթե իմանայի, որ մայրս էլ է ինձ մոռացել, Սիբիրը ինձ համար ավելի լավ կլիներ...

Բնական և խորին թախծությամբ արտասանված պարզ բողբոջ հանկարծ սթափեցրեց մոլորված կնոջը: Քողն ընկավ նրա աչքերից. խաբուսիկ պատկերը չքացավ, դառն իրականությունն

ամենայն մերկութեամբ երևան եկավ մինչև այդ վայրկյան ցնորք համարված այլանդակ էակի կերպարանքով:

Նա ճանաչեց յուր որդուն, ճանաչեց Նրա ծայնը, Նրա աչքերը: Նրա ոտները թուլացան. հարվածն անսպասելի էր և սաստիկ: Նրա գլուխը պտտեց, աչքերը մթնեցին, գուցե նա տեղն ու տեղը գետին ընկներ, եթե որդուն չհիար, ոսկրոտ ձեռները չսույն վայրկյանին չգրկեին Նրան:

Այս ամբողջ տեսարանը կատարվեց մի քանի վայրկյանում միայն:

Երբ որդին աջ կուռը վերցրեց մոր ուսից, Նրա կապայի թևը մի փոքր ետ քաշվեց: Երևեցավ Նրա բազուկը, որի վրա երկաթե կապանքը անջնջելի կերպով դրոշմել էր յուր կոշտ հետքը սև և լայն ապարանջանի ձևով:

— Հիմա ճանաչո՞ւմ ես,— ասաց նա, պարզելով յուր բազուկը Անթառամի աչքի առջև:

Այդ բազուկի վրա կար ծննդյան մի մեծ և բոլորակ խալ:

Անթառամը բաց թողեց որդուն յուր գրկից, նայեց Նրա ոտից մինչև գլուխ աղճատված կերպարանքին, ձեռները բարձրացրեց վեր և, յուր ալեզարդ գլխին մի ուժգին հարված տալով, գոչեց դառն ձայնով.

— Երանի մեռնեի և քեզ չտեսնեի...